«Հայաստանի Հանրապետության տարածքում շրջանառության թույլատրված քաղաքացիական և ծառայողական զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի և փամփուշտների հաշվառման պետական կադաստրի վարման կարգը սահմանելու մասին»

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

---------- 2023 թվականի N - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼԱՏՐՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԶԵՆՔԻ, ՀՐԱԶԵՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍԵՐԻ ԵՎ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Սահմանել՝

Հայաստանի Հանրապետության տարածքում շրջանառության թույլատրված քաղաքացիական և ծառայողական զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի և փամփուշտների հաշվառման պետական կադաստրի վարման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված

ՀՀ կառավարության

2023 թվականի

«--» «--------» N --- -Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼԱՏՐՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԶԵՆՔԻ, ՀՐԱԶԵՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍԵՐԻ ԵՎ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ

1. **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում շրջանառության թույլատրված քաղաքացիական և ծառայողական զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի և փամփուշտների հաշվառման պետական կադաստրի (այսուհետ՝ Կադաստր) վարման հետ կապված հարաբերությունները։
2. Սույն կարգի դրույթները չեն տարածվում մշակութային արժեք ներկայացվող զենքի վրա։

3. Կադաստր չեն մուտքագրվում Հայաստանի Հանրապետությունում արտադրվող, ներկրվող և արտահանվող քաղաքացիական զենքի նմուշ օրինակների վերաբերյալ տվյալները։

4. Կադաստրում մուտքագրվող քաղաքացիական և ծառայողական զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի և փամփուշտների մոդելների ցանկը հաստատվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից։

5. Կադաստրում փոփոխություններ են արվում քաղաքացիական և ծառայողական զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի և փամփուշտների մոդելների ցանկը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատելուց հետո՝ ոչ ուշ, քան երեք ամսվա ընթացքում։

6. Կադաստրը բաղկացած է հետևյալ բաժիններից.

ա) հայրենական արտադրության քաղաքացիական և ծառայողական զենք, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր և փամփուշտներ.

բ) օտարերկրյա արտադրության քաղաքացիական և ծառայողական զենք, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր և փամփուշտներ։

7. Կադաստր են մուտքագրվում քաղաքացիական և ծառայողական զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի և փամփուշտների մասին (ըստ կադաստրի բաժինների) հետևյալ տեղեկությունները.

ա) հայրենական արտադրության արտադրության քաղաքացիական և ծառայողական զենք, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր և փամփուշտներ բաժնում.

1. զենքի մոդել (փամփուշտի տեսակ) և օգտագործվող փամփուշտի անվանումը, նշանակությունը և քանակը.

2. զենքի և փամփուշտների հիմնական տեխնիկական ցուցանիշները, իրավական ակտի հղումը, համապատասխանության գնահատման փաստաթղթի համարը, գործողության ժամկետը.

3. արտադրողի անվանումը, հասցեն.

4. նմուշի գունավոր լուսանկար,

բ) օտարերկրյա արտադրության քաղաքացիական և ծառայողական զենք, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր և փամփուշտներ բաժնում.

1. զենքի մոդել (փամփուշտի տեսակ) և օգտագործվող փամփուշտի անվանումը, նշանակությունը և քանակը.

2. զենքի և փամփուշտների հիմնական տեխնիկական ցուցանիշները, իրավական ակտի հղումը, համապատասխանության գնահատման փաստաթղթի համարը, գործողության ժամկետը.

3. երկրի և արտադրողի անվանումը, հասցեն.

4. նմուշի գունավոր լուսանկար։

8. Քաղաքացիական և ծառայողական զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի և փամփուշտների մասին տեղեկատվությունը կադաստրում մուտքագրումը կատարվում է տեխնիկական կանոնակարգման

(այսուհետ՝ տեխնիկական կանոնակարգ) օբյեկտ հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետությունում արտադրված, Հայաստանի Հանրապետություն ներմուծվող և Հայաստանի Հանրապետությունից արտահանվող բոլոր մոդելների (բացառությամբ մշակութային արժեք հանդիսացող) նկատմամբ տեխնիկական կանոնակարգով սահմանված համապատասխանության գնահատման դրական արդյունքների հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հավատարմագրված և նշանակված համապատասխանության գնահատման մարմնի կողմից տրամադրված համապատասխանության գնահատման փաստաթղթի առկայության դեպքում:

9. Քաղաքացիական և ծառայողական զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի և փամփուշտների մասին տվյալների մուտքագրումը կադաստր իրականացվում է 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ հայտատուի (իրավաբանական կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձ, որը հանդիսանում է արտադրող, ներմուծող արտահանող կամ արտադրողի կողմից լիազորված անձ) կողմից լիազորված մարմնին ուղղված գրության (էլեկտրոնային ուղեկցվող հայտի՝ կից փաստաթղթերով) հիման վրա։

10. Հայտին կից հայտատուի կողմից լիազորված մարմնին պետք է ներկայացվեն սույն կարգի 7-րդ կետով պահանջվող բոլոր փաստաթղթերը։

11. Ստանդարտացման և չափագիտության լիազորված մարմինը վարում է և մուտքագրում տվյալները՝ յուրաքանչյուր քաղաքացիական և ծառայողական զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի և փամփուշտների մոդելի կամ տիպի համար՝ շնորհելով գրանցման հերթական համար։

12. Յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ստանդարտացման և չափագիտության լիազորված մարմնի կողմից հաշվետու ժամանակահատվածում՝ տվյալ ամսվան նախորդած եռամսյակի ընթացքում մուտքագրված տվյալները համապատասխան ուղեկցող գրությամբ ներկայացվում են Հայաստանի Հանրապետության կառավարություն։

13. Սույն կարգի 12-րդ կետով ստանդարտացման և չափագիտության լիազորված մարմնի կողմից ներկայացված տվյալների հիման վրա կադաստրը հաստատվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից և հրապարակվում Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական կայքէջում։

14. Կադաստրի տվյալների մուտքագրման հիմք հանդիսացող ներկայացված բոլոր էլեկտրոնային փաստաթղթերը պահվում են ստանդարտացման և չափագիտության լիազոր մարմնում՝ երեք տարի ժակմետով։

15. Արգելվում է կադաստր չներառված, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից չհաստատված և Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական կայքէջում չհրապարակված քաղաքացիական և ծառայողական զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի և փամփուշտների հաշվառումը ՀՀ ոստիկանության կողմից։